ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2023 թ. № 266

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Քնարիկ Արտուշի Պետրոսյանի 2023 թվականի մարտի 15-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 2-ի «Քնարիկ Արտուշի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 44,2 քառակուսի մետր մակերեսով բնակարանի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 197 որոշման 1-ին կետում «հասարակական» բառից հետո լրացնել «որպես ատամնաբուժարան» բառերը:

2. Սույն որոշմամբ կատարած փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2023թ. № 267

# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0025-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,12 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1954386 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006RAVDVJP) և Դավիթ Գարեգինի Նաջարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Դավիթ Գարեգինի Նաջարյանին (ծնված՝ 09.08.1954թ.) սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-006-0025-0007 կադաստրային ծածկագրով 0,12 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 113,8 քառակուսի մետր մակերեսով մառանին տրամադրել «ք. Սպիտակ, Առափնյա թաղամաս, 194 մառան» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2023թ. № 268

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ և 4-րդ կետերով, որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0309-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,0854 հեկտար մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասի վրա 2005 թվականին ինքնակամ կառուցված պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Սարգիս Թամազյան Ռոբերտի» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 20237MGXLZ և

Կադաստրի կոմիտեում հացեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06006KHVBLYK)՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ք. Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցքում գտնվող 06-006-0309-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,0854 հեկտար մակերեսով այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ք. Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցքում գտնվող 06-006-0309-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,0854 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

3. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ք. Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցքում գտնվող 06-006-0309-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,0854 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 18,70 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Ք. Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 1/1 պարիսպ» հասցեն:

6. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

7. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել Ռոբերտ Հովհաննեսի Ասմարյանին (ծնված՝ 16.05.1960 թ.) օրինականացված կառույցները և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ. Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 27

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2023թ. № 269

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին մասով, 50-րդ և 58-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-006-0309-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2005 թվականին ինքնակամ կառուցված ծածկի և պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Սարգիս Թամազյան Ռոբերտի» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված

եզրակացությունը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը 2023BM6JRH և Կադաստրի կոմիտեում հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք 06006V86QPBK)՝

***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ք.Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցքում գտնվող 06-006-0309-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

2. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ Ք.Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցքում գտնվող 06-006-0309-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,1396 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 147,8 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 16,7 քառակուսի մետր մակերեսով և 13,1 քառակուսի մետր մակերեսով պարիսպները ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Ք.Քըրքորյան փողոց, 2-րդ նրբանցք, 1 ծածկ» հասցեն:

5. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

6. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել Ռոբերտ Հովհաննեսի Ասմարյանին (ծնված՝ 16.05.1960 թ.) օրինականացված կառույցները և դրա պահպանման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ.Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 27

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

« 27 » մարտի 2023թ. № 270

## ««ՖԱՁ» ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետով, հաշվի առնելով հայկական ձեռնամարտի ֆեդերացիայի նախագահ Ջալիկո Համբարյանի գրությունը, 2023 թվականի մարտի 28-ին ««ՖԱՁ» ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ-ի կողմից կազմակերպված ՀՀ ձեռնամարտի ֆեդերացիայի առաջնությանը, մարզիկների նախապատրաստման համար, մարզիչներին խրախուսելու նպատակով շնորհակալագրեր և հուշանվերներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 81 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«27» մարտի 2023թ. № 271

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0188-0042 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,04 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի մարտի 24-ի թիվ 01/111.6/02128-2023 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Ուզբեկական թաղամասում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության 06-006-0188-0042 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,04 հեկտար մակերեսով խառը հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Գ. Չոբանյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 27
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2023թ. №272

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՄԲՈՅԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի մարզիկներ Մխիթար Նորայրի Մխիթարյանը, Ռաֆիկ Վահանի Մանուկյանը Հայաստանի Հանրապետության մարտական սամբոյի մեծահասակների առաջնությունում զբաղեցրել են 1-ին տեղերը, Կառլեն Արսենի Մահինյանը Հայաստանի Հանրապետության սամբոյի մեծահասակների առաջնությունում զբաղեցրել է 2-րդ տեղը, Արթուր Երվանդի Սահակյանը, Ալեքսան Ստյոպայի Ստեփանյանը Հայաստանի Հանրապետության սամբոյի մեծահասակների առաջնությունում զբաղեցրել են 3-րդ տեղերը, Արման Ալիկի Խոյեցյանը Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնությունում զբաղեցրել է 3-րդ տեղը, Միեր Միհրանի Մելոյանը Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնությունում զբաղեցրել է 1-ին տեղը, հիմք ընդունելով մարզիկների դիմումները և 07.03.2023թ-ին տրված դիպլոմները՝ ***որոշում եմ***

1. Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից մարզիկներին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում.

   1) Մխիթար Նորայրի Մխիթարյանին՝ 70 000 ՀՀ դրամ,
   2) Ռաֆիկ Վահանի Մանուկյանին՝ 70 000 ՀՀ դրամ,
   3) Կառլեն Արսենի Մահինյանին՝ 49 000 ՀՀ դրամ,
   4) Արթուր Երվանդի Սահակյանին՝ 35 000 ՀՀ դրամ,
   5) Ալեքսան Ստյոպայի Ստեփանյանին՝ 35 000 ՀՀ դրամ,
   6) Արման Ալիկի Խոյեցյանին՝ 28 000 ՀՀ դրամ,
   7) Միեր Միհրանի Մելոյանին՝ 42 000 ՀՀ դրամ,

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գույքի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 28
ք.Սպիտակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2023թ. № 273

## «ԴԻԼԿԱՐ ՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 106-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերության, հիմք ընդունելով «ԴԻԼԿԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի 2023 թվականի մարտի 27-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԴԻԼԿԱՐ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06804708) տալ «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Ալեք Մանուկյան փ. 19» հասցեում գտնվող դեղատանը ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 28
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2023թ. № 274

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի թիվ 84 որոշմանը կից ցուցակում չի նշվել Սարգիս Մկրտչի Այվազյանի (ծնված 22.12.1961թ.) հայրանունը, հիմք ընդունելով Սարգիս Մկրտչի Այվազյանի անձնագրային տվյալները և դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Տեր Սիմոնյան, Մուրացան, Շիրակի խճուղի, Երևանյան խճուղի և Գործարանային փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 84 որոշմանը կից ցուցակի 335-րդ տողում գրված «Սարգիս» բառից հետո լրացնել «Մկրտչի» բառը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 28
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2023թ. № 275

# ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 25 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 1999 թվականի փետրվարի 26-ի թիվ 25 որոշման մեջ Էմմա Երվանդի Բեջանյանի ծննդյան տարեթիվը սխալմամբ գրվել է «1945», Երվանդ Արտիկի Բեջանյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Արթիկի», Մարիաննա Սերոբի Բազոյանի ազգանունը «Բոզոյանի» փոխարեն սխալմամբ գրվել է «Բողոյան» (ազգանունը Սպիտակի քաղաքապետի 1999 թվականի փետրվարի 26-ի թիվ 25 որոշման ընդունման պահին եղել է Բոզոյան, որը փոխվել է 28.04.2004 թվականին), հիմք ընդունելով Էմմա Երվանդի Բեջանյանի, Արև Երվանդի Բեջանյանի, Երվանդ Արթիկի Բեջանյանի, Մարիաննա Սերոբի Բազոյանի անձնագրային տվյալները և Արև Երվանդի Բեջանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 1999 թվականի փետրվարի 26-ի «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 25 որոշման 1-ին կետի 1.2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.2.Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 7-րդ շենքի, հմ. 30, 3 սենյականոց, 86,3 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը

Էմմա Երվանդի Բեջանյանին-ինքը, ծնված 28.12.1946թ.

Արև Երվանդի Բեջանյանին-քույրը, ծնված 18.08.1957թ.

Երվանդ Արտիկի Բեջանյանին-եղբոր տղան, ծնված 09.06.1981թ.

Մարիաննա Սերոբի Բոզոյանին-քրոջ աղջիկը, ծնված 02.12.1987թ., որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ սեփականություն»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. մարտի 28
ք.Սպիտակ